

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գորիսի պետական համալսարան
tmarutyan@mail.ru, 093-003-103
<https://orcid.org/0009-0005-8374-0024>

DOI: 10.54503/1829-0116-2023.1-286

ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԵԼԱՆ» ՏՊԱՐԱՆԸ (1955-1983թթ.) ԵՎ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր - «Սելան» տպարան, Սիմոն Սիմոնյան, գրահրատարակչատուն, Սփյուռք, գիրք, դասագիրք, հրատարակություն, «Սփիւռք» շաբաթաթերթ:

Հոդվածը նվիրված է 1955-1983թթ.-ին Բեյրութում գործած հայկական «Սելան» տպարանի և համանուն գրահրատարակչատան գործունեության լուսաբանմանը:

Մեր նպատակն է ներկայացնել «Սելան» տպարանի և գրահրատարակչատան հիմնադրման պատմությունը, Սփյուռքում ծավալած բազմադյունք գործունեությունը, որը իրագործեց լիբանանահայ երախտաշատ մտավորական, գրող, խմբագիր, հրապարակախոս Սիմոն Սիմոնյանը:

Հոդվածի խնդիրն է արժևորել «Սելան»-ի կատարած կրթալուսավորական դերը սփյուռքահայ իրականության մեջ, Սիմոն Սիմոնյան գրահրատարակչի ունեցած ավանդը Սփյուռքում հայ գրքի ստեղծման, տարածման ու հանրայնացման գործում:

«Սելան» տպարանի ու դրա հիմնադիր Սիմոն Սիմոնյանի հրատարակական գործունեությունը դեռևս առանձին ամբողջական ուսումնասիրության նյութ չի դարձել, ինչը ինքնին հաստատում է հոդվածի գիտական նորույթը և արդիականությունը:

Հոդվածում կիրառել ենք պատմական մեթոդը:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք եզրակացության, որ Բեյրութում Սիմոն Սիմոնյանի անհատական նախաձեռնությամբ հիմնադրված

և շուրջ երեք տասնամյակ Նրա իսկ խմբագրատնակում գործած «Սեւան» տպարանը հրատարակած մեծաթիվ դասագրքերով, գրական-գեղարվեստական, պատմաբանասիրական, թարգմանական, բառարանագրական, կրոնադավանաբանական և բազմաբնույթ այլ արժեքավոր հրատարակություններով մեծապես նպաստել է հայ գրքի ստեղծմանը, տարածմանն ու հանրահռչակմանը, սփյուռքահայության գիտակրթական, մշակութային ու ստեղծագործական զարգացմանը, ազգային նկարագրի պահպանմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը Սփյուռքի գրեթե բոլոր հայկական կրթօջախներում:

TEHMINA MARUTYAN

PhD in Philology, Associate Professor

Goris State University

THE ARMENIAN “SEVAN” PRINTING HOUSE OF BEIRUT (1955-1983) AND THE BOOK PUBLISHING ACTIVITY OF SIMON SIMONYAN

Keywords: “Sevan” printing house, Simon Simonyan, publishing house, Diaspora, book, textbook, publication, “Diaspora” weekly newspaper.

The article covers the activities of the Armenian “Sevan” printing house and the publishing house of the same name, which operated in Beirut from 1955-1983.

Our goal is to present the history of the founding of the “Sevan” printing house and the book publishing house, the multi-fruitful activity in the Diaspora, which was carried out by the great Lebanese-Armenian intellectual, writer, editor and public speaker Simon Simonyan.

The purpose of the article is to appreciate the educational and enlightening role played by “Sevan” in the Armenian Diaspora and the contribution of book publisher Simon Simonyan to the creation, distribution and popularization of Armenian books in the Diaspora.

The publishing activity of the “Sevan” printing house and its founder Simon Simonyan has not yet become the subject of a separate complete study, which in itself confirms the scientific novelty and relevance of the article.

In the article, we used historical method.

As a result of the study, we concluded that the “Sevan” printing house, founded in Beirut on the individual initiative of Simon Simonyan and operating under his editorship for almost three decades, has greatly contributed to the creation, distribution and popularization of Armenian books in the Diaspora, the

scientific, cultural and creative development, the preservation of the national image and the education of Armenians with a large number of textbooks, literary-artistic, historical, translation, lexicographical, theological and other valuable publications.

ТЕЙМИНА МАРУТЯН

Кандидат филологических наук, доцент
Горисский государственный университет

АРМЯНСКАЯ ТИПОГРАФИЯ «СЕВАН» В БЕЙРУТЕ (1955-1983) И КНИГОИЗДАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ СИМОНА СИМОНЯНА

Ключевые слова: типография «Севан», Симон Симонян, издательство, Диаспора, книга, учебник, издание, еженедельная газета «Спюрк».

В статье освещается деятельность армянской типографии «Севан» и одноименного издательства, функционирующих в Бейруте в 1955-1983 гг.

Наша цель – представить историю создания типографии «Севан» и книжного издательства, а также ту плодотворную деятельность в Диаспоре, которую осуществлял видный ливано-армянский интеллектуал, писатель, редактор и публицист Симон Симонян.

Цель статьи – дать оценку образовательной и просветительской роли «Севана» в армянской общине и обозначить вклад книгоиздателя Симона Симоняна в формирование, распространение и пропаганду армянских книг в Диаспоре.

Издательская деятельность типографии «Севан» и ее основателя Симона Симоняна еще не стала предметом отдельного комплексного исследования, что само по себе подтверждает научную новизну и актуальность статьи.

В статье нами был применен исторический метод. В результате исследования мы пришли к выводу, что типография «Севан», основанная в Бейруте по личной инициативе Симона Симоняна и работавшая под его руководством почти три десятилетия, внесла большой вклад в популяризацию армянских книг, в научное, культурное и творческое развитие армянской диаспоры, в сохранение национального облика и просвещение армян посредством большого количества опубликованных учебников, литературно-художественных, исторических, переводных, лексикографических, богословских и других ценных изданий.

1950-1980-ական թվականներին Սփյուռքում իր գրահրատարակչական, մշակութային և մամուլական գործունեությամբ առանձնանում է գրող, խմբագիր, հրապարակախոս, բանասեր Սիմոն Սիմոնյանը:

Նա 1955 թվականին Բեյրութում հիմնում է «Սեւան» տպարանը և համանուն գրահրատարակչատունը, որ բացառիկ իրագործում է եղել սփյուռքահայ իրականության մեջ և առանձնահատուկ տեղ ունի հայ գրատպության պատմության համապատկերում(Նկ.1): Որպես այդպիսին՝ այն անհատական ձեռնարկ էր, անկախ հաստատություն, ոչ թե այս կամ այն միությանը կամ կուսակցությանը պատկանող կառույց: «Սեւան» հրատարակչատունը տպագրել է շուրջ 500 գիրք, 55 անուն դպրոցական դասագիրք, որ անգերազանցելի մրցանիշ է՝ դիտարկելի ոչ այնքան թվաքանակային, որքան բովանդակային նշանակությամբ:

Գրական-գեղարվեստական, պատմաբանասիրական, թարգմանական, բառարանագրական, կրոնադավանաբանական և բազմաբնույթ այլ հրատարակություններով «Սեւան»-ը մեծապես նպաստել է սփյուռքահայության ազգային դիմագծի պահպանմանը, համագային արժեքների վերակոչմանը, մշակութային, գիտակրթական ու ստեղծագործական զարգացմանը: «Կազմել, գրել, խմբագրել, սրբագել, համահեղինակել, տպագրել դասագրքեր՝ ելնելով սփյուռքահայ դպրոցի շահեից և ոչ թե փառասիրությունից, ճանաչել տալ հայ գիրը, հայ հոգին, հայ միտքը, հայ կրոնը, հայոց ուխտը՝ հայ դատը - սա է Սիմոն Սիմոնյան մտավորականի, գրողի, դաստիարակ-մանկավարժի և տպարանատիրոջ կյանքի նշանաբանը», - այսպես է բնութագրում Սիմոնյան գրահրատարակչին Սասուն Գրիգորյանը (Գրիգորյան, 1999, էջ 72):

Հայ գրքի ստեղծման, տարածման ու հանրայնացման գործում վիթխարի դեր խաղացած «Սեւան» տպարանի և, առհասարակ, Սիմոնյանի գրական, բանասիրական ու գրահրատարակչական բազմադյունք գործունեության մասին խորհրդային և հետագա տարիներին հայրենիքում գրեթե չի խոսվել, եղել են մասնակի անդրադարձներ հիմնականում սփյուռքահայ գրագետների շրջանում (Սասուն Գրիգորյան, Լևոն Շառոյան, Ժիրայր Դանիելյան և ուրիշներ): Սփյուռքում համազգային օրապահանջ հարցեր բարձրացնող ազատախոհ

մտավորականի նկատմամբ խորհրդային վարչակարգն ուներ վերապահելի վերաբերմունք: Նրա ստեղծած արժեքները արգելված գրականություն էին համարվում՝ հրատարակված «հակասովետական Սիմոնի կողմից» (ՊԱԿ-ի(ԿԴԵ) բնորոշումն է): Սակայն Սիմոնյանը որքան էլ զգաց ու խորապես ծանր տարավ այդ անարդարացի վերաբերմունքը իր անձի ու գործի նկատմամբ, համոզված էր, որ վաղ թե ուշ ոչ միայն մարդիկ, այլև «գիրքներն ալ ներգաղթելու են» հայրենիք՝ դառնալով հայ մշակութային ժառանգության անբաժանելի մասը: Ավելի ուշ շրջանում հայրենիքում եղան մասնակի անդրադաձներ Սիմոնյանի գրահրատարակչական գործունեությանը. 2015-ին «Սեւան» տպարանի, «Սփիւռք» շաբաթաթերթի մասին մասին բառահողվածներ երևացին «Հայ գրատպություն և գրքարվեստ» հանրագիտարանում (Հայ գրատպություն և գրքարվեստ, 2015, էջ 959):

Սիմոնյանի գրահրատարակչական նախասիրությունների ձևավորման ընթացքը

Սիմոնյանի բանասիրական հակումները, գրահրատարակչական նախասիրությունները ձևավորվել էին դեռևս Դպրեվանքում ուսանելու տարիներին:

Բաբկեն Աթոռակից կաթողիկոսը, հասկանալով, որ հնարավոր չէ առանց մատենադարանի կաթողիկոսարան ու Դպրեվանք պահել, 1931 թվականին ձեռք է բերում պոլսեցի նշանավոր գրասեր ու հոգևորական Տեր Հովհաննես Ավագ քահանա Մկրյանի արժեքավոր մատենադարանը և 1932-ին փոխադրում Անթիլիաս: Մատենադարանը բաղկացած էր 3200 հատոր դասական մատենագրությունից, ձեռագրերից և 19-րդ դարի պարբերականների հավաքածուներից: Այդ մեծարժեք գրքերի ու ձեռագրերի՝ Անթիլիաս փոխադրումը հիմք է ծառայում Կաթողիկոսարանի մատենադարանի և ձեռագրատան ստեղծման համար և բարեշահ առիթ Դպրեվանքի սաների համար՝ հայկական հին ու նոր մատենագրությանը ծանոթանալու և ուսումնասիրելու: Հնադարյան ձեռագրերի կախարդանքը մասնավորապես հրապուրել է Դպրեվանքի առաջին սերնդի աշակերտներից Սիմոն Սիմոնյանին՝ ապագա մանկավարժին, դասագրքերի հեղինակին, բանասերին, խմբագրին, գրահրատարակչին, գրողին, որ պիտի դառնար «այդ ձեռագիրները առաջին խուզարկողը» (Սիմոնյան,

1981, էջ 7)

Առհասարակ, մեծ էր Բաբկեն Աթոռակից կաթողիկոսի վաստակը Դպրեվանքի առաջին սերնդի սաների վրա, որին անդրադառնալով Սիմոնյանը վկայում է, թե «(...) իրեն կը պարտինք մեր նախասիրութիւնները (հայագիտութիւն, պատմիչներ, գրաբար, հայ մատենագրութիւն) լեզուական մոլեռանդութիւնը, նկարագիրը (...)» (Տե՛ս «Սփիւռք», 13 հոկտեմբերի, թիվ 40 1966թ., էջ 1): Իսկ Դպրեվանքին անդրադառնալով՝ 1936 թվականին իր ուսուցիչներից Բյուզանդ Եղիայանին գրում է. «Աւագուտքին՝ որբերու ձեռքով կերտուած համեստ շէնքերուն մէջ շինուեցաւ անտեսանելի միւս շէնքը, ուրիշներ պիտի ըսէին բարոյական շէնքը, միտքի եւ հոգիի լաւագոյն վաստակովը մեր ուսուցիչներուն: Տաճար մը եղաւ ան լոյսի, որովհետեւ օրհնուեցաւ աղօթքով, քար առ քար բարձրացաւ ազնիւ աշխատնաքով...» (Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, ԾԵ. տարի, թիւ 3, մարտ, 1986, Անթիլիաս, Լիբանան, էջ 118):

Մատենադարանի ու ձեռագրատան հիմնադրումից հետո նշանակալից իրադարձություն էր Կաթողիկոսարանի տպարանի բացումը: Բաբկեն կաթողիկոսին հաջողվում է Աթենքի որբանոցից բերել ուղքով աշխատեցվող տպագրական մեքենա, իսկ Պոլսի Գևորգյան ծովարանից՝ հայերեն տառեր: Տպարանի առաջին գրաշարերը և ուսնամամուլով տպագրիչները Դպրեվանքի սաներն էին և մասնավորապես ապագա տպարանատեր պատանի Սիմոն Սիմոնյանը:

Մատենադարանի նորաստեղծ տպարանում նա գտնում է իր իսկական «բնակատեղին», սուզվում է մագաղաթների ու գրքերի աշխարհը՝ հագեցնելով դրանց հանդեպ ունեցած ծարավը այն աստիճանի, որ Բաբկեն Աթոռակիցը նրան «փոքրիկ բանասեր» էր անվանում (տե՛ս «Հասկ» պարբերաթերթ, մարտ-ապրիլ, 1969, էջ 134), իսկ դասընկերները կատակելով ասում էին՝ «մագաղաթ կը հոտիս»:

Անթիլիասում ստեղծված մատենադարան-տպարան-վարժարանը, Դպրեվանքում ստացած գրաբարի և մատենագրության գիտելիքները, անխոնջ ինքնաշխատությունը և մտահորիզոնը զարգացնելու ինքնախոյզ կիրքը լավագույնս ձևավորում են ապագա հանրագիտակ մտավորականին: Դպրեվանքի դասընկերներից Նշան Խոշաֆյանը մի առիթով նկատել է. «Երբ Դպրեվանքէն շրջանաւարտ ելանք, Սիմոն Սիմոնեան արդէն պատմաբան-բանասէր ու գրագետ էր» (Տե՛ս Խոշաֆեան Ն., «Սիմոն Սիմոնեանի «Լեռնականներու Վերջալոյ-

ւր», «Սփիւռք», թիւ 24, 7 Յունիս 1970, Պէյրութ, էջ 4):

Բյուզանդ եղիայանը վկայում է, որ Սիմոնյանը «անշիջելի ծարաւ մը ունէր գրքերու հանդէպ: Մատենադարանը իր իսկական բնակավայրն էր. իր «հանապազօրեայ հացին»-ին կէսը անկէ կը ստանար: Իր փոքրիկ հասակին չափ բարձր դէգ մը կը կազմէին գրքերը, զորս միշտ իր կողքին կը պահէր, իր գրասեղանի նստարանին մէկ կէսը գրաւած. պատմութեան գրքեր, բանասիրութեան գրքեր, բոցի ու լոյսի գրքեր: Ու երբ Բաբգէն Կաթողիկոս իր անուան ակնարկել ուզէր, «փոքրիկ բանասէրը» կը կոչէր զինք, որովհետեւ այս տղան ամէն օր կու գար բանասիրական փոքրիկ «գիւտ» մը հռչակելու, դէմքը պայծառացնող երջանկութեամբ մը, գիւտեր՝ Կաղանկատուացիէն մինչեւ Երզնկացի, եւ աննշան ծեռագրէ մը բաղդատուած տող մը» (տե՛ս Եղիայեան Բ., «Հասկ» պարբերաթերթ, Մարտ-Ապրիլ 1969, էջ 134):

Նախքան Բեյրութում «Սեւան» տպարանի ու հրատարակչատան հիմնումը՝ Սիմոնյանը դեռեւս Հալեպում 1944-1945 թվականներին հիմնադրել էր **«Սեւան» հրատարակչական մարմինը և համանուն պարբերաթերթը**: Հայկ Պարիկյանի և Հովսեփ Վարժապետյանի կազմած «Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպարաններու» մատենագիտական աշխատության մէջ ակնարկ կա նաև «Սեւան»-ի մասին. «Տպարան «Սեւան»-ը հիմնուած է 1944-ին, Հալեպահայ Ուսուցչական Միութեան անդամ խումբ մը ուսուցիչներու կողմէ (Գրիգոր Պօղարեան, Սիմոն Սիմոնեան, Փիլիպպոս Դերձակեան, Լեւոն Պերդուտեան), առաջադրութիւն ունենալով լաւագոյնս ծառայել կրթական եւ մշակութային գործին» (Պարիկեան, Վարժապետեան, 1973, էջ 76): Կան տեղեկություններ, որ Հալեպի «Սեւան» հրատարակչատան հիմնադիրներից էր նաև վաստակաշատ մանկավարժ Երվանդ Տասնապետյանը (տե՛ս **Դանիելյան**, 2007թ., էջ 73): Տպարանը գործել է մինչև 1946 թվականի ամառը: Այստեղ հրատարակվել են գրական ժողովածուներ, այդ թվում Լևոն Բաշայանի պատմվածքները, Վահան Տերյանի հատընտիրը և այլն: Այս շրջանի կարևոր հրատարակություններից էին նաև 1946-ին լույս տեսած **«Սեւան» պարբերագրի** երկու համարները (տե՛ս «Սեւան» Պարբերագիրք գրականութեան եւ արուեստի, Հալեպահայ ուսուցչական միութեան Սեւան հրատարակչական մարմին, թիվ Ա, Բ, Հալեպ, 1946): Պարբերագրում հանդես են եկել ժամանակի սփյուռքահայ երևելի դեմքերից շատերը՝ Հովսեփյանց Գարեգին կաթողիկոսը, Նիկոլ Աղբալյանը, Վահան Թեքեյանը, Հակոբ Օշականը,

Հրաչյա Աճառյանը, Եղիվարդը, Չարեհ Մելքոնյանը, Սմբատ Փանոսյանը, Անդրանիկ Ճառուկյանը, Բյուզանդ Եղիայանը, Սեզան, Վահե Վահյանը, Շավարշ Նարդունին, Շահան Պերպերյանը, Եղիա Քասունին և ուրիշներ: Այս պարբերագրքում են առաջին անգամ տպագրվել Սիմոնյանի պատմվածքները սասունցի լեռնականների մասին¹: Համարներում Սիմոնյանը հանդես է եկել նաև գրախոսականներով:

1946 թվականին Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի հրավերով Սիմոնյանը հաստատվում է Բեյրութում: Այստեղ նա անցնում է ուսուցչական աշխատանքի՝ հին հայ մատենագրություն և հայոց լեզու դասավանդելով Դպրեվանքում, զուգահեռաբար նաև՝ ՀԲԸՄ-ի Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան և Դարուհի Հակոբյան քույր վարժարաններում (մինչև 1960-ը): 1947-ին Գարեգին կաթողիկոսը Նրան նշանակում է Ս. Աթոռի պաշտոնաթերթի՝ «**Հասկ**»-ի խմբագիր, ինչպես նաև իր «գիտական աշխատակից» (նկ. 2)՝ խմբագրելու իր անտիպ ու անավարտ գործերը, հատկապես «Յիշատակարան ձեռագրաց»-ը (լույս է տեսել միայն Ա հատորը՝ 1951-ին): Հայրապետի թելադրանքով Սիմոնյանը ձեռնամուխ է լինում նաև «**Հասկ հայագիտական տարեգրքի**»² հրատարակությանը, իրար հետևից՝ 1948-ին, 1949-50-ին և 1957-ին լույս են տեսնում տարեգրքի երեք հատորները: Անթրիլիասում Սիմոնյանը խորապես ընդարձակում է իր գիտելիքները. Փոլատյանի հետ «Չրոյց»-ում նշում է. «Կարդացած եմ բոլոր հին մատենագիրները, բոլոր հայ պատմիչները, անոնց նվիրուած բոլոր ուսումնասիրություններով: «Արարատ», Էջմիածնի պաշտոնաթերթը՝ 1868-1918, կարդացել եմ ծայրե ծայր: Նաեւ՝ «Բազմավեպ», «Հանդես Ամսօրեայ» և այլն, և այլն» (Փոլատյան, 1988թ.):

Սեփական տպարան, հրատարակչատուն և մամուլ ունենալու երազանքը Սիմոնյանին տևապես հանգիստ չէին տալիս և ահա 1954 թվականին Խորհրդային Հայաստան կատարած առաջին և միակ այցից հետո վերադառնալով Բեյրութ՝ ձեռնամուխ է լինում «Սեւան»-ի հիմնադրմանը, որ պատմական խոշորագույն ձեռնարկում էր: Սիմոնյանը խորապես գիտակցել է «Սեւան»-ի նշանակությունը հայապահ-

1 «Հասկ» հայագիտական տարեգիրք, Ա տարի, 1948, Տպարան կաթողիկոսութեան Կիլիկիոյ, Անթրիլիաս-Լիբանան: Նույնը՝ Բ տարի, 1949-50, «Նվիրուած Հայրապետական Մայր Աթոռի Էջմիածին փոխադրութեան հինգհարիւրամեակին (1441-1941)»: Նույնը՝ Գ տարի՝ 1957-ին, Տպարան Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթրիլիաս-Լիբանան:

2 Տե՛ս **Չարենց Ե.**, Բանաստեղծություններ, Ա հատոր, տպ. Սեւան, Պեյրութ, 1955թ., 432 էջ:

պանության գործում, առհասարակ գրահրատարակչական գործի ազգային ու մշակութային առաքելությունը՝ մինչև իր կյանքի վերջին օրը ծառայելով այդ հանձնառությանը՝ հայության գոյատևման, ազգային նկարագրի պահպանման գլխավոր նախադրյալներից մեկը համարելով հայ գիրքը: Հատկանշական է, որ այդ համոզմունքով 1960 թվականին «Սփիւռք»-ում առաջադրեց մի ուշագրավ գաղափար՝ **Ապրիլի 24-ը հռչակել հայ գրքի օր**՝ «կարգախօս ունենալով իւրաքանչիւր հայ նահատակի դէմ գիրք մը սպառել, եւ ասիկա՝ ամէն տարի անընդհատ: Արտասահմանի մէկ միլիոն հաշուող հայերէն իւրաքանչիւրը եթէ տարին գիրք մը միայն գնէր՝ ապրիլեան միլիոն մը հայ նահատակներու հոգիներուն իբրեւ մատաղ, նախ՝ Մեսրոպներու եւ Խորենացիներու ժառանգութիւնը յանձնած պիտի ըլլար յաւիտենութեան, երկրորդ՝ լուծած պիտի ըլլար արդարագոյն վրէժը հայ նահատակներուն» (տե՛ս «Ապրիլ 24», «Սփիւռք», 23 ապրիլի, թիվ 15, 1960թ., էջ 4):

«ՍԵՆԱՆ»-Ի գրահրատարակչական ժառանգությունը. ուրվագիծ

Այն շրջանում, երբ Սիմոնյանը Լիբանանում հիմնեց «ՍԵՆԱՆ»-ը, տեղում գործում էին Անթիլիասի, Համազգայինի և «Հայ կաթողիկէ» տպարանները, նաև՝ «Ատլաս», «Մշակ», «Արագ», «Յոյս», «Տօնիկեան», «Ռոթոս», «Օնիպար», «Էտվան» և այլ հրատարակչատներ, սակայն «ՍԵՆԱՆ»-ը (նկ. 3, 4, 5, 6) հայ հավաքական մտքի, հայ գրքի կենտրոնատեղին էր (հասցեն՝ Բեյրութ, Ղալոյվ փողոց, թիվ 36), որ պիտի կյանքի կոչեր բացառիկ ծրագրեր: Էական է նկատել, որ 1955-1983 թվականների ընթացքում Լիբանանում գործող հայկական հրատարակչատների տպագրած 2844 գրքերից մոտ 500-ը միայն «ՍԵՆԱՆ»-ն է հրատարակել:

Սկզբից ևեթ ունենալով ոչ թե առևտրական, այլ կրթալուսավորական նպատակներ՝ Սիմոնյանը տպարանին կից հիմնում է համալուսն հրատարակչական տունը, և ինչպես ինքն է մի առիթով վկայել՝ «պատկից, մին միւսին համար, մին պաշտպանելու միւսը մեկը լրացնելու միւսին գործը» (Դանիելյան, 2011, էջ 476):

«Պեյրութի կեդրոնը, անդադար աշխատող հայ տպարան մը կայ: Ոչ Հայպետհրատն է, ոչ Վիեննականը, ոչ ալ Միխիթարեանականը: Այդ տպարանին հայրն է՝ Սիմոն Սիմոնեան: Մեքենաները ու իր միտքը,

միասին կ'աշխատին, միասին կ'ապրին, միասին կը ստեղծագործեն: Մեքենաները անդադար կ'աշխատին, եւ իրենց «անթայ»ներուն (արգանդ) մէջէն կը ծնին թերթեր, գիրքեր: Սեւցած մելանով եւ քրտինքով, այդ մեքենաները կը ծնին իրենց սեւ քրտինքին մէջէն՝ հայ ցեղի քրտինքին գիրքերը» (տե՛ս Հայր և որդի Չաքար և Պարույր Մասիկյան, Սիմոն Սիմոնեան եւ Արեւելահայ գրականութիւնը, «Սփիւռք», 1966, թիվ 42, էջ 3):

Սիմոնյանն ինքը կազմել է «Սեւան»-ում հրատարակված գրքերի **հուշագանկը** (Գրիգորյան, 1999, էջ 73), որը նպատակադրվել էր ամբողջացնել և հրատարակել առանձին հատորյակով՝ տպարանի պատմությունը ներկայացնող նախաբանով: Ցավոք, նա չհրապործեց այդ ծրագիրը:

Հատկանշական է, որ «Սեւան» հրատարակչատան **երախայրիքները** 1955-ին Եղիշե Չարենցի բանաստեղծությունների ժողովածուն էր¹ և Ակսել Բակունցի ամբողջական գործի առաջին հատորը², ապա 1956-ին՝ երկրորդը³: Երբ դեռ Բակունցը արգելված գրող էր համարվում հայրենիքում, Սիմոնյանը նրա երկերը հրատարակում է «Սեւան» մատենաշարով՝ կցելով գործը ըստ ամենայնի արժեւորող առաջաբան: Որպես այդպիսին՝ այն անդրանիկ հրատարակությունն էր, որից հետո կարճ ժամանակ անց հայրենիքում Պետհրատը տպագրել է «Երկեր»-ը: Սիմոնյանը խորապես գիտակցել է Բակունցի՝ «խորունկ», «լուրջ, ճարտար ու ճարտարապետող» գրողի ստեղծագործության բացառիկ արժեքը, որ «մնայուն գանձն է հայ գրականության», պարբերաբար անդրադարձել է նրան «Սփյուռք» շաբաթաթերթի էջերում, հրապարակել տարբեր հուշապատկերներ, լուսաբանել Սփյուռքում Բակունցի 70-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառումները: Թերթում բազմաթիվ նյութեր կան Բակունցի կորսված ձեռագրերի, ողբերգական մահվան, ստեղծագործությունների տարբեր գնահատությունների մասին:

Ահա թե ինչ է գրում Սիմոնյանը Ա հատորում՝ հրատարակչության կողմից. «խոր հրճվանքով կը հրատարակենք Ակսել Բակունցի ամբողջական գործը, առնուազն 700 մեծադիր էջերով: ... Բակունց

1 Տե՛ս **Բակունց Ա.**, Պատմվածքներ, Ա հատոր, 1955, Պեյրուք, 1955, 220 էջ: **Բակունց Ա.**, Պատմվածքներ և վիպակներ, Բ հատոր, 1956, Պեյրուք, 1956, 172 էջ:

2 Տե՛ս **Բակունց Ա.**, Պատմվածքներ և վիպակներ, Բ հատոր, 1956, Պեյրուք, 1956, 172 էջ:

խորհրդահայ գրականության մեջ գազաթ մըն է իբրեւ արձակագիր: ... ՍԵԻՄԸ ՀՐԱՏԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ գոհունակությամբ ունի խորհրդահայ մեծատաղանդ արձակագիրը իր ամբողջական գործով ներկայացնելու սփիւռքի հայության»:

Պատահական չէ, որ «ՍԵԼԱՆ» հրատարակչատունը իր գործունեությունը սկսել է Չարենցի ու Բակունցի՝ «խորհրդահայ գրականության երկու գազաթների» բացառիկ հրատարակություններով՝ հնչեցնելու և կենդանացնելու նրանց անունները, ապրեցնելու և ժառանգորդելու գործը՝ «ամենեւնի մնայուն սյուներեն մեկը»: «Հինգ ամիս եւ մամուլի տակ է արդեն Եղիշէ Չարենցի ամբողջական գործերուն հաւաքածուն, չորս հատորով, անմրցելի տպագրութեամբ, որ բացի մեր մեծանուն քերթողին արձակ ու չափաչոյ բոլոր գործերէն, պիտի պարփակէ իր մասին յոյս տեսած կարեւորագոյն ուսումնասիրութիւնները»,- 1955 թվականին իր «Մանրանկար պետիրատը...» հոդվածում նորահաստատ տպարանի հնգամսյա բեղուն գործունեության մասին գրում է Եղիա Նաճարյանը (տե՛ս Նաճարեան Ե., «Մանրանկար պետիրատը...», «Այգ», թիվ 769, 28 օգոստոսի, Բեյրութ, 1955, էջ 2):

Այդ հրատարակությունները իրապես Սիմոնյանի գիտակցված նվիրումի արդյունքն էին, որոնք սփյուռքահայության համար բացեցին հայ նահատակ գրողների՝ Բակունցի ու Չարենցի գրաշխարհի հմայքը:

Առաջին արժեքավոր հրատարակությունների շարքում էին նաև Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմությունը», Ա հատոր, 1955, 684 էջ, ինչպես նաև Ս. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարան»-ի Ա և Բ հատորները՝ 608 և 512 էջերով, ապա 1956-ին՝ Գ և Դ հատորները՝ 614 և 647 էջերի ծավալով:

«ՍԵԼԱՆ» հրատարակչատան՝ սկզբից ևեթ որդեգրած գիտակրթական ուղղվածությունը շարունակվեց նաև հետագա տարիներին:

«ՍԵԼԱՆ»-ի գրահրատարակչական գործը գնահատելու համար կարևոր է հրատարակությունների թեմատիկ խմբավորումը:

Բազմապրոֆիլ հրատարակությունների շարքում առանձնակի կարևորություն են ներկայացնում **դասագրքերը**: Դպրոցական դասագրքերի հանդեպ այդ հատուկ ուշադրությունը գալիս էր Սիմոնյան ուսուցչի մտահոգություններից, արժեհամակարգից՝ «դիվաղնելու համար հայ ուսուցչին աշխատանքը, արդիւնաւորելու համար հայ

ուսանողին ճիգը, գրաւիչ դարձնելու համար դասարանին մթնոլորտը, բարձրացնելու համար հայ դպրոցին բերքը» (տե՛ս Նաճարեան Ե., «Մանրանկար պետհրատը...», «Այգ», թիվ 769, 28 օգոստոսի, Բեյրութ, 1955, էջ 2): Իր գիտամանկավարժական խորքային ու պրակտիկ կարողությունների շնորհիվ Սիմոնյանը սփյուռքահայ դպրոցի համար տպագրեց հայ ժողովրդի պատմության, հայ գրականության, հայոց լեզվի, աշխարհագրության, թվաբանության, կրոնի, գեղագիտության և այլ առարկաների գծով 55-ից ավելի դասագրքեր, որից 18-ի հեղինակը կամ համահեղինակը ինքն էր: Այդ դասագրքերից շատերը, մասնավորապես՝ հայոց պատմության դասագրքերը մինչև օրս էլ գործածվում են Սփյուռքի մի շարք դպրոցներում:

1939 թվականին, երբ տակավին 25 տարեկան էր, Սիմոնյանը հրատարակում է «Հայոց պատմություն» դասագրքերի շարքի առաջին գիրքը, որն արժանանում է ՀԲԸՄ-ի Նուբարյան մրցանակին: Դասագիրքը շուրջ վեց տասնամյակ գործածվել է Սփյուռքի հայկական գրեթե բոլոր դպրոցներում՝ կրթելով բազմաթիվ սերունդների: 1941-ին Սիմոնյանը սկսում է հրատարակել հայերեն լեզվի «Արագած» պատկերազարդ դասագրքերի շարքը՝ Նախակրթարանի Ա-2 կարգերի համար՝ համագործակից ունենալով Օսնիկ Սարգիսյանին, ինչպես նաև ավարտին հասցնում «Հայոց պատմություն» դասագրքերի ամբողջական շարքի հրատարակությունը վեց հատորով՝ Նախ՝ Հալեպում, ապա՝ Լիբանանում:

Հայոց պատմություն, հայոց լեզու, քերականություն, աշխարհագրություն, գիտություն, կրոն, թվաբանություն, երգ, գծագրություն, գեղագրություն - թեմատիկ այս շրջագծով լույս տեսնող «Սեւան»-ի դասագրքերը գործածվում էին Արգենտինայի, Ավստրալիայի, Եգիպտոսի, Եթովպիայի, Իրաքի, Լիբանանի, Կիպրոսի, Հայաստանի՝ մասնավորապես Էջմիածնի, Հնդկաստանի, Միացյալ Նահանգների, Հորդանանի, Հունաստանի, Պաղեստինի (Երուսաղեմ), Բրազիլիայի, Սուդանի, Սիրիայի, Կանադայի, Քուվեյթի և Ֆրանսիայի ամենօրյա և միօրյա վարժարաններում: Ինքն էլ հավաստել է, որ դասագրքերը կազմվել են գաղութային տեղավայրերի «կրթական ծրագիրներուն համադրությամբ» (տե՛ս Անդրանիկ Տադեայանի հոդվածը՝ «Սփյուռքահայ հաղորդակցական իւրօրինակ ցանց մը 1940-80ականներուն. Սիմոն Սիմոնեանի «Սեւան» հրատարակչական տան հայալեզու դասագրքերը» հոդվածը: Հայկական անդրսահմանային տարածա-

կանութիւնը եւ արդի հաղորդակցական միջոցները, գիտաժողովի Նյութեր, 2014, էջ 24): Լինելով դպրոցական գործի փայլուն գիտակ՝ Սիմոնյանը ոչ միայն հայկական գաղութների դպրոցների համար հրատարակել է դասագրքեր՝ աչքի առաջ ունենալով անընդհատ նորացվող կրթադաստիարակչական պահանջները, այլև «Սփիւռք»-ի էջերում հրապարակային քննության ու քննադատության է ենթարկել հայրենիքից գաղութահայ դպրոցների համար ուղարկված դասագրքերը՝ մատնանշելով դրանց «մահացու» սխալներն ու «աններելի» թերությունները (տե՛ս «Սփիւռք», 1965թ., 21 հուլիս – 29 սեպտեմբեր), որ առանձին ուսումնասիրության նյութ է:

Դասագրքերի առաքման երկրներ, քանակ և թվական¹

Երկիր	Տարեթիվ	Քանակ
Արգենտինա	1961	1760
Ավստրալիա	1967	80
Եգիպտոս	1963	560
Եթովպիա	1961	2505
Երուսաղեմ	1964	2424
Իրաք	1959	2116
Լիբանան	1957	548
Խ.Հայաստան	1963	10
Կիպրոս	1941	250
Հնդկաստան	1959	150
ԱՄՆ	1956	1495
Հորդանան	1956	270
Հունաստան	1961	431
Սուդան	1956	115
Սիրիա	1939	1287
Կանադա	1959	47
Ֆրանսիա	1953	375

1 Տվյալները՝ ըստ Անդրանիկ Տազեյանի: Տե՛ս Հայկական անդրսահմանային տարածականութիւնը եւ արդի հաղորդակցական միջոցները, գիտաժողովի Նյութեր, Բեյրութ, 2014, էջ 24:

Ըստ Ժիրայր Դանիելյանի՝ «Սեւան»-ի հրատարակած 55 դասագրքերը ունեցել են շուրջ 150 տպագրություն (Դանիելյան, 2011, էջ 478): Հստակ թիվ չկա, թե որքան է կազմել տպաքանակը, բայց կան որոշակի տվյալներ, որ միայն դասագրքերի ընդհանուր տպաքանակը կարող է 200.000-ը անցած լինել: Եղիա Նաճարյանը, «Մանրանկար Պետհրատը» հոդվածում անդրադառնալով «Սեւան»-ի գործունեությանը, դեռևս 1955-ին խոսում է դասագրքերի՝ արդեն նվազագույնը 50.000 ընդհանուր տպաքանակի մասին (տե՛ս «Այգ» օրաթերթ, թիվ 769, 28 օգոստոսի, 1955, էջ 2), և յուրաքանչյուր դասագրքի տպագրության տպաքանակ է հաշվում 3000-ը: Կան նաև մասնակի տեղեկություններ, որ ամեն դասագիրք տպվել է 4-5000 տպաքանակով:

Այսպես, Սիմոնյանը աշխարհագրության չորս դասագիրք է համահեղինակել Երվանդ Պապայանի և Օննիկ Սարգսյանի հետ՝ 1962-1968 թվականների ընթացքում: Այս ծիրում դիտարկենք նաև Հարություն Մուշյանի «Աշխարհագրություն արդի Հայաստանին» (1964թ., 108 էջ) և «Ատլաս Պատմական և արդի Հայաստանի»՝ 8 թերթով, 1964թ.:

1956-1960թթ.-ի ընթացքում Օննիկ Սարգսյանի հետ համահեղինակել է հիրավի կոթողային հայոց լեզվի «Արագած» պատկերազարդ դասագրքերի շարքը՝ Ա-2 տարիներ:

Սարգիս Պալյանի հետ 1967-ին հեղինակել և տպագրել է «Նոր քերականություն» Ա և Բ գրքերը:

«Սեւան»-ի՝ առանձնակի նշանակությամբ հրատարակություններից էին Մեսրոպ Վարդապետի Կրոնի դասագրքերը՝ Ա-Ե հատորով՝ յուրաքանչյուրը՝ չորս կամ երեքական տպագրությամբ՝ 1955-ից 1972 թվականների ընթացքում: Այս շարքում է նաև Մեսրոպ Վարդապետի «Կրոնի գիրք, Պատմություն հայ եկեղեցի» դասագիրքը, որ հրատարակվեց 1957-ին՝ 216 էջով:

Լշենք նաև Արտաշես Սարգիսյանի հեղինակած թվաբանության դասագիրքը՝ Ա-2 տարիների համար, Հրաչ Տասնապետյանի «Իրագիտություն և գիտության դասեր» դասագրքերը՝ դարձյալ Ա-2 հատորներով, որոնք լույս տեսան 1959 թվականի ընթացքում, Պարույր Խաչերյանի կազմած գեղագրության դասագիրքը՝ 1-6 տետրակներով, Բյուզանդ Կոճամանյանի գծագրության դասագիրքը և այլն:

Այսպես, «Սեւան»-ը անգնահատելի դեր է խաղացել թե՛ սփյուռքահայ դպրոցների համար տպագրվող դասագրքերի որակի բարելավման և թե՛ դրանց զանգվածային պահանջարկի բավարարման

գործում:

Երկրորդ խումբը կազմում են **հայագիտական հրատարակությունները, մեծադիր բառարանները, պատմական ու գրաքննական գործերը**: Այդ մեծաքանակ գրականության մեջ հայ մշակույթի համար որպես հիմնարար աշխատություններ առանձնանում են Մանուկ Աբեղյանի երկհատոր «Հայոց հին գրականության պատմությունը» (Ա հատոր՝ 1955թ., Բ հատոր՝ 1959թ.)՝ 1284 մեծադիր էջերով, Մալխասյան բացատրական բառարանի քառահատոր շարքը՝ եռասյուն ու մանրատառ՝ 2400 էջերով, Օրմանյան պատրիարքի «Ազգապատումը»՝ ինը հատորով՝ մեծադիր 5834 սյունակներով կամ 2917 էջերով, Հրաչյա Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ը՝ 5 հատորով՝ 3120 էջերով, Լևոն Զորմիսյանի «Համապատկեր արեւմտահայոց մեկ դարու պատմութեան» Բ և Գ հատորները՝ մեծադիր 1324 էջերով, Արշակ Ալպոյաճեանի «Պատմութիւն Մալաթիոյ հայոց»-ը՝ 1536 մեծադիր էջերով, Հովհաննես Թորոսյանի «Պատմություն հայ Տոմարծայ»-ի եռաշարքը (1959-1969թթ.), Գ.Ասթարճեանի «Արաբական պատմութիւն»-ը (1961), «Պատմութիւն արաբական գրականութեան և մշակույթին» (1970), Ստեփան Շահպագի «Մենք հայերս», «Գրիգոր Զոհրապ» ուսումնասիրությունները՝ 1959-ին, «Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ Վազգէն Ա-ի ուղեւորութիւնը» գիրքը՝ 1957-ին, «Էջմիածին եւ Անթիլիաս»՝ 1959-ին, ինչպես նաև ժամանակի հայտնի մտավորականների՝ Կ.Փոլատյանի, Կ.Սասունիի, Գ.Աճեմյանի, Երվանդ Քասունիի, Պետրոս Բեդիրյանի, Հակոբ Ասատուրյանի, Ալբերտ Կոստանյանի, Լևոն Վարդանի, Կարապետ Իզմիրյանի և այլոց արժեքավոր գրքերը:

«Սեւան»-ում են տպագրվում Սիմոնյանի պատմաբանասիրական արժեքավոր ուսումնասիրությունները՝ «Արեւելահայ գրականութիւն» կոթողային ուսումնասիրությունը և դրանից առանձնացված «Արեւելահայ գրողներ»-ը՝ մեծադիր ու երկսյունակ 934 էջերով՝ տպագրված 1965-ին, «Հին հայ մատենագրութիւնը որպէս ենթահող արդի հայ գրականութեան» աշխատությունը (1975թ.)՝ մաս-մաս հրապարակված «Սփիւռք» շաբաթաթերթում, «Սեւան» ընդարձակ բառարանի Ա հատորը՝ 1970-ին, «Նորայայտ Տաղասաց Մը՝ Ստեփանոս Դաշտեցի եւ յաւելլուած Նաղաշ Հովնաթանի Եօթը Անտիպ Տաղերը»՝ 1981-ին:

«Արեւալահայ գրականութիւն» սովորածավալ աշխատություն-

նը (ընտիր էջեր, կենսագրություններ, գործեր, բառարան, մատենագիտություն)՝ շուրջ 800 էջով «իր տեսակի մեջ՝ լավագույն գործը» (Սողոմոն Տարոնցի), անմիջապես արժանանում է համընդհանուր ուշադրության ինչպես Սփյուռքում, մասամբ նաև հայրենիքում: Աշխատությունը արտասահմանի բազմաթիվ կրթական հաստատություններում ծառայեց նաև որպես արևելահայ գրականության դասագիրք: Ծրագրած հինգհատորյանի մյուս չորս հատորները՝ «Հայ հին գրականությունը» (Ե. - ԺԹ դար), «Արևմտահայ գրականությունը» (1850-1915), «Գաղութահայ գրականությունը» (1918-1965) և «Խորհրդային գրականությունը» (1921-1965), Սիմոնյանը չհասցրեց հրատարակել: «Երկրորդը մամուլի տակ է: Երրորդը պատրաստ: Միաներուն ատաղձը պատրաստ է: Ալիշանեան աշխատութիւն մը, որ միայն վաճականներուն մասնահատուկ է»,- կարդում ենք օրվա մամուլի ծանուցումներում (տե՛ս «Սփիւռք», 1966, թիվ 42, էջ 3): «Մասիս», «Հառաջ», «Հասկ», «Սփիւռք» և այլ լրատվականներ Հրաչ Զաքարենցի, Բյուզանդ Եղիայանի, Հայր Համազասպ Ոսկյանի, Արա Գալաճյանի, Ստեփան Պարսումյանի գրախոսականներով ու անդրադարձներով շատ բարձր են գնահատում հատորի ծնունդը: Աշխատության գրապատմական արժեքը հայրենիքից հղած սամակների միջոցով գնահատում են նաև Ծիրազը, Դաշտենցը, Նորենցը և ուրիշներ: «Նախ՝ 836 էջ «ընտրել» և «բնորոշել» կարենալու համար՝ անկկա առնվազն 80.000 էջ կարդացա՛ծ պետք է ըլլայ եւ չափելու, ծելելու, բաղդատելու գրական երկրաչափի յոգնութիւն մը պարտադրած պետք է ըլլայ իր անձին», - «Սփիւռք»-յան անդրադարձներում գրում են հայր և որդի Մասիկյանները (տե՛ս «Սփիւռք», 1966, թիվ 42, էջ 3): Իսկ Սիմոնյան ներհուն բանասերի ընդարձակ առաջաբանը «Արեւելահայ գրականութիւն» հատորին վրայ գրուած կամ գրուելիք գրախոսականներուն լաւագոյնը կը հանդիսանայ» (տե՛ս «Սփիւռք», 1966, թիվ 42, էջ 3):

«Արեւելահայ գրողներ»-ը ամփոփում է «գրական գեղարվեստական դատումներ, կենսագրութիւններ, գործերը, մատենագիտություն, արեւելահայ գրականութեան մասին, կարծիքներ գրական արդի աշխարհաբարի եւ արեւելահայ գրականութեան մասին և բառարան»:

Առանձին խումբ են կազմում **Սփյուռքի՝ այսպես ասած հետպատերազմյան գրողների հրատարակությունները՝ արձակ ու չափածո:** Սիմոնյանը հուշացանկում նշել է ժամանակային շրջագիծը՝ 1921-1979թթ.: Այս ծիրում են Շահան Շահնուրի երկերը՝ «Թերթիս կիրակ-

Նօրեայ թիւը՝ 1958-ին, «Նահանջը առանց երգի» վեպը՝ 1959-ին, Պարոյր Մասիկեանի, Սիրան Սեգայի, Նշան Պեշկեպաշյանի, Մուշեղ Իշխանի, Ժագ Հակոբյանի, Կարո Փոլատյանի («Կրակէ շապիկը»՝ 1966-ին), Երվանդ Պարսումյանի, Չարեհ Որբունու, Ստեփան Շահպազի, Գալուստ Խանենցի, Սմբատ Փանոսյանի և այլոց երկերի հրատարակությունները:

Այս սյունակում պետք է դիտարկել նաև **Սիմոնյանի գեղարվեստական բոլոր գործերը**՝ «Լեռնականներու վերջալոյսը», «Սիփանա քաջեր» (Ա, Բ մասերով) պատմվածքների ժողովածուները, «Խմբապետ Ասլանին աղջիկը», «Կը խնդրուի խաչածեւել» երկերը, «Լեռ եւ ճակատագիր» հատընտիրը, ինչպես նաև 1981-ին լույս տեսած միակ վեպը՝ «Անժամանդրոսը», որը գրողի կտակի համաձայն՝ հրապարակ է հանվել նրա մահից հետո:

«Սփիւռքի Նոր սերնդի գրողներ»-ի ցանկում են Գուռցի Միքայելյանը՝ վիպակներով ու վեպով՝ 1959-1969թթ.-ի տպագրությամբ, ժամանակի մեծատաղանդ արձակագիրներից Գևորգ Աճեմյանը՝ անդրանիկ հրատարակություններով՝ 1958-1968թթ.-ի ընթացքում: Վերջինիս էլ Սիմոնյանը հետագայում պիտի փոխանցեր «Սփիւռք»-ի հրատարակման արտոնագիրը, Սիմոնյանի աշակերտ ու գրական լավ բարեկամ Ասատուր Կյուզեյանը՝ «Համոյ եւ Ֆատիե» անդրանիկ ստեղծագործությամբ՝ 1959-ին, Չարեհ Մելքոնյանը՝ բանաստեղծական ժողովածուով և «Սիրոյ ցանցին մէջ» թատերգությամբ՝ 1962-ին, Պողոս Գյուլբեյանը, Արամ Սեփեթյանը, Վեհանույշ Թեքյանը, Թորոս Թորանյանը, Վահրամ Հաճյանը, Մովսէս Պէպքեանը և ուրիշներ: Ընդ որում, Նշված հեղինակներից շատերը, օրինակ՝ Լևոն Վարդանը, Ասատուր Կյուզեյանը, Վեհանուշ Թեքյանը, Մովսէս Պէպքեանը և ուրիշներ, առաջին անգամ գրական հանրությանը ներկայացել են հենց «Սեւան»-յան հրատարակությամբ, ինչպես առանձին գործերով որպես գրական ասպարեզում նոր անուններ հընթացս ներկայացվել «Սփիւռք»-ի էջերում՝ արժանանալով Սիմոնյան խմբագրի գնահատությանն ու քաջալերանքին:

Արևմտահայ գրողներից Սիմոնյանը հրատարակել է Միքայել Կյուրճյանին՝ «Քսան տարի ետք», «Պատմվածքներ և պատկերներ» երկերով՝ 1961-ին, Երվանդ Օտյանին՝ հայտնի երգիծավեպով՝ երեք մասերը առանձին. «Ընկ Բ. Փանջուկի ի ճապլվար», «Ընկ. Բ. Փանջուկի ի Վասպուրական»՝ երկուսն էլ Ալ. Սարուխանի երգիծանկարներով՝

1962-ին, դարձյալ 1969-ին՝ «Ընկ Բ. Փանջունի Տարագրության մեջ» հատորը, ինչպես նաև Օտյանի «Իմ աշխարհայացքները»՝ «յարակից ու լրացուցիչ նիւթերով, խմբագրութեամբ եւ ուսումնասիրութեամբ Սիմոն Սիմոնեանի»: 1967 թվականին «Սեւան»-ը հրատարակում է Ռուբեն Չարդարյանի «Գեորգ Չաուշ»-ը, 1974 թվականին նաև՝ Սիւսմանթի «Ամբողջական երկեր»-ը:

Հայրենական (հայաստանյան) գրողներից Չարենցից ու Բակունցից հետո 1963 թվականին Սիմոնյանը համագային գաղափարական վերագարթոնքի ալիքով հրատարակում է Պարույր Սևակի «Անլռելի գանգակատուն» պոեմը՝ 1963-ին, 1971-ին նաև «Եղիցի լույս» ժողովածուն: «Սեւան»-ը չի շրջանցում նաև Սփյուռքում հարազատ անուն և մասնավորապես «Սփիւռք» շաբաթաթերթում մշտական ներկայություն ունեցող Հովհաննես Շիրազին՝ «Հայոց Դանթեականով»՝ 1965-ին՝ որպես քերթվածավեպ, «Հուշարձան մայրկիս» ժողովածուով, ինչպես նաև անձնապես Սիմոնյանի խմբագրությամբ 1971-ին լույս է տեսնում Շիրազի «Հատընտիրը»: Շիրազի հետ նույնպես Սիմոնյանը ունեցել է շատ սերտ գրական-մարդկային կապեր, նամակագրություն, որ ըստ ամենայնի ցույցն է «Սփյուռք»-ի էջերում: Հատկանշական է նաև ժամանակի նոր անուններից Ռազմիկ Դավոյանի «Խաչերի ջարդը» գրքի տպագրությունը 1972-ին (խմբագիր, սրբագրող, հրատարակող՝ Ս.Սիմոնյան), որ նույն թվականին շարունակաբար լույս էր տեսել «Սփիւռք» շաբաթաթերթի համարներում: Գրքույկի գեղարվեստական ձևավորումն արել է Ռ. Դավոյանի մտերիմ ընկերներից գեղանկարիչ Հարություն Թորոսյանը: Տակավին երիտասարդ Ռազմիկ Դավոյանի հետ նույնպես Սիմոնյանը սրտամոտ նամակագրություն ուներ և նրա գրական ծրագրերին պարբերաբար անդրադարձել է «Սփիւռք»-ում:

Հրատարակչության «Հուշացանկ»-ում Սիմոնյանը առանձնացրել է թատերական ուղղվածությամբ հրատարակությունները՝ **«Թատերգություններ, թատերագիտական երկեր և թատերական հուշեր»**: Այս ծիրում են Միքայել Կյուրճյանի, Չարեհ Մելքոնյանի, Երվանդ Գարաճյանի, Մովսես Պաքսյանի, Էդուարդ Չափրաստի և այլոց երկերը: Արժեքավոր ուսումնասիրություն է հրատարակվել՝ նվիրված լիբանանահայ թատրոնի պատմությանը (Դավիթ Էվերեկյան, 1971):

Առանձին շարք են կազմում **հուշագրությունները, օրագրությունները, ուղևորական տպավորությունները**, ինչպես նաև **թարգմանա-**

կան գրականությունը: Այսպես՝ օտար լեզվից հայերեն թարգմանություններ, ինչպես՝ Ալբերտ Շվայցըրի «Քրիստոնեություն եւ աշխարհի կրօնքները» (թարգմանիչ՝ Սիոն Եպիսկոպոս)՝ 1961-ին, Ջեյմս Մորիսի «Հաճի Բաբայի արկածները Պարսկաստանում»՝ 1966-ին, Օմար Խայամի քառյակները՝ 1968-ին, Վիլյամ Սարոյանի պատմվածքները՝ 1978-ին, և «Մարդկային կատակերգությունը»՝ 1979-ին: Հայտնի է Սիմոնյանի և Վիլյամ Սարոյանի մեծ բարեկամությունը՝ հաստատված մարդկային ջերմ շփումներով հենց Բեյրութում, տևական նամակագրությամբ, ստեղծագործական, գրահրատարակչական բազմաթիվ ծրագրերի կենսագործմամբ (սկ. 7):

«Սեւան» հրատարակչատունը արաբերեն թարգմանությամբ հրատարակել է Շիրազի «Սիամանթո եւ հշեգարե» պոեմը՝ 1961-ին, Ներսես Շնորհալիի «Հավատով խոստովանիմը»՝ անգլերեն՝ 1975-76-ին, «Couleura d'Armenie» Հայաստանի 12 նկարիչների գունազարդ պատկերազիրքը՝ ֆրանսերեն՝ 1972-ին, Հենրի Կլոքլորի «Արգելափակուած Թուրքիոյ մէջ» երկը անգլերեն՝ 1969-ին և այլ գրքեր:

Սիմոնյանը չհասցրեց իրագործել բազմաթիվ ծրագրեր, այդ թվում՝ վերջին մատենաշարը՝ «**Արեւմտահայ գրողներ 100 հատորով**», որ ինչպես ինքն է ձևակերպել՝ «Սեւան» հրատարակչական տան «անլուելի երազն էր»՝ ի հայտ եկած հայոց Եղեռնի 50-րդ տարեկից ոգեկոչման հետ: Թորոս Թորանյանի հետ զրույցում Սիմոնյանը, թվարկելով առաջիկայում իրականացնելիք ծրագրերը, խոսում է նաև «Արեւմտահայ գրականությունը 100 հատորով տալու» ուշագրավ գաղափարի մասին. «Գիրքեր հաւաքած եմ, պիպլիոկրաֆիներ նոյնպէս, երբ աշխատանքի անցնիմ երեք տարի ուրիշ գործով զբաղելու չեմ – Արեւմտահայ գրադարանը 100 հատորով» (տե՛ս «Շիրակ», Պէյրութ, թիւ 8-9, 1989թ., էջ 16):

Այդ ծրագիրը իրականացնելու համար Սիմոնյանը դիմել է նաև սփյուռքահայ բարերարների և, ի վերջո, հանգել սեփական միջոցներով այն կյանքի կոչելու գաղափարին:

Ասատուր Կյուզեայանը իր «Կը խոսին նամակները» գրքում հրապարակել է իրեն և Երվանդ Պարսումյանին Սիմոնյանի հասցեագրած նամակներից մեկը՝ բարերարին՝ Խաչիկ Մթըրպեանին ուղղված ներփակ նամակով, որը Լոնդոնում վերջիններիս կողմից պիտի փոխանցվեր Նրան՝ «մեծ ու պատվաբեր այդ մեկենասությունը» ստանձնելու համար: Եվ ոչ միայն փոխանցվեր, այլև ըստ ամենայնի ներ-

կայացվեր Սիմոնյան գրահրատարակչի բացառիկ ծրագիրը՝ հաշվի առնելով նրա «ազնուական ու քաջ հոգին, գրական բարձր հասկացողությունը»: 7 հուլիս, 1971 թվակիրով նամակում Սիմոնյանը մասնավորապես գրում է. «Մեր ժողովուրդի եւ անոր մշակոյթին մեծագոյն գանձերէն մէկն է Արեւմտահայ Գրականութիւնը, որ 1915ին իր ժողովուրդին պէս նահատակութիւն կրեց: Աւելի քան 55 տարիներ ետք, դեռ կարելի չեղաւ Արեւմտահայ սքանչելի գրողներուն գործերը հրատարակել ամբողջական, գիտական ու ակադեմիական ձեւով մը, եւ զանոնք յանձնել լոր սերունդին՝ ժառանգորդներուն, որոնք իբրեւ հայ երկրորդական բազմաթիւ վարժարաններու ուսանողներ, գրասէրներ, գրողներ եւ ընթերցողներ, պատկառելի թիւ մը կը ներկայացնեն, եւ աւելի քան երբեք անհրաժեշտութիւն մը դարձած է անոնց հրատարակութիւնը: Արեւմտահայ մեր բոլոր գրողներուն գործերը, 100 հատորներով, նոյն չափով, նոյն թուղթով, կազմով ու գեղեցիկ տպագրութեամբ, անգլիական Nelson հրատարակութեանց ձեւով, կենսագրութեամբ, մատենագիտութեամբ (bibliography), բառարանով, պիտի կազմեն իսկական **մատենադարան** մը եւ իրենց մեծ *թիրաժով*, պիտի մտնեն մեր բոլոր դպրոցներէն, գրադարաններէն, ակումբներէն, անհատական թէ միութեանական գրադարաններէն ներս, եւ այսպիսով կարելի պիտի ըլլայ արեւմտահայ մեր ժողովուրդին հոգեւոր հարստութիւնը փրկել նահատակութենէ:

Դուք, մեծարգոյ Պրն. Մթընպեան, իբրեւ մտաւորական ու գրող, վստահ ենք, որ ամենէն աւելի պիտի գնահատեք այս ծրագիրը եւ պիտի ստանձնեք անոր մեկենասութիւնը՝ յաւերժացնելով Ձեր եւ Ձեր ազնիւ տոհմին անունը:

Մատենաշարը կրնայ կոչուիլ «ՄԹՐԸՊԵԱՆ ՄԱՏԵՆԱԾԱՐ» կամ Ձեզի սիրելի որեւէ անունով, որուն Դուք Հայու սրտով կապուած էք եւ որ Ձեզ կը կապէ Ձեր արիւնին» (Կիւզելեան, 2014, էջ 48-49):

Սիմոնյանը համոզմունք է հայտնում, որ պատկառելի այդ հրատարակությունը պիտի լինի «**քարէ բարերարութիւններէ աւելի մնալուն**»՝ որպէս **փոխվրէժ Ապրիլի 24-ին**: «Առանց զօրաւոր գրականութեան՝ դպրոց, եկեղեցի, լեզու եւ մշակոյթ զուրկ պիտի մնան աւիշէ եւ շատ բան պիտի կորսնցուցն իրենց իմաստէն» (Կիւզելեան, 2014, էջ 48-49):

Հատկանշական է, որ որդուն գրած նամակներից մեկում Սիմոնյանը դառնությամբ գրում է. «Ես հաւատացած էի եւ հաւատացած

եմ, որ եթե մեր ժամանակներուն մեջ կարելի չի Արեւմտահայ հողերը ազատագրիլ, բայց կարելի է մեր ժամանակներուն մեջ ազատագրիլ Արեւմտահայ գրականութիւնը և փոխանցել յաջորդ սերունդին: Չազատագրուած հողերուն զոհ գնաց իմ երագը՝ Արեւմտահայ գրականութիւնը...» (Գրիգորյան, 1999, էջ 17):

«Սեւան» տպարանում **լրիվ շարված, ավարտուն կամ կիսավարտ ու լույս չտեսած** գրքերից հատկանշական են Չարեհ Որբունու «Մտածումները», Երվանդ Օտյանի «Պատերազմ և խաղաղությունը», աստվածաբանական-իմաստասիրական մի ուսումնասիրություն՝ Էջմիածնից, Եղեկատի Հայոց Պատմագիրքը (գործը պիտի բաղկանար 1500 երկայուն ու մեծադիր էջերից, որոնց 100 էջն է միայն տպագրվել), «Հայերենէ հայերեն» բառարանը՝ երկհատոր, առաջին հատորը՝ 737 էջերով, երկայուն ու մանրատառ՝ արդեն լրիվ պատրաստ վիճակում:

Այդ շարքում մեծ կշիռ են կազմում հենց Սիմոն Սիմոնյանի գործերը, ինչպես արդեն նշեցինք՝ «Արեւմտահայ գրականությունը» և «Հայ հին գրականությունը»՝ «Արեւելահայ գրականութեան» ծավալով ու ծրագրով, Պետրոս Դուրյան՝ ըստ իր ձեռագիրներուն՝ Սիմոնյանի ուսումնասիրությամբ, «Կը խնդրուի խաչածեւել» երկը՝ վերամշակված ու ամբողջացված՝ մոտավորապես 300 էջերով¹, այլ գրքեր, որոնք հենց Սիմոնյան է նշել «Սեւան»-ի հրատարակելիք գրքերի հուշացանկում և կատարել ծանոթագրություններ: Սրանց պետք է հավելել նաև բոլոր այն գեղարվեստական ու բանասիրական անտիպ երկերը, որոնք այժմ պահվում են Սիմոնյանի արխիվում, այդ թվում «պատմվածքների նոր շարք մը սասունցիների մասին», որ «Լեռնականների վերջալույսին շարունակությունն է», «Գերեզման չտարուելիք բաներ, որից 24 գլուխ վերջացուցած եմ», հուշագրություններ՝ Արշակ Զոպանյանի, Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի, Կոստան Չարյանի, Հակոբ Օշականի, Վիլյամ Սարոյանի և այլ բազմաթիվ հայտնի դեմքերի մասին, որոնց հետ ջերմ հարաբերություններ է ունեցել Սիմոնյանը, «Սփիւռք» շաբաթաթերթում հրապարակված արևմտահայ լեզվի, Հայ դատի, Հայաստանի, զանազան մարդկանց ու հարցերի մասին տպագրված մոտ տասը հազար հոդվածները երկու հատորով տպագրելու անկատար մնացած ծրագիրը, Շահան Շահնուրի մասին ուսումնասիրություն՝ ըստ նորահայտ փաստերի, «Վաթսուն տարի Հայ գրականութիւն Սուրիոյ եւ Լիբանանի մէջ»՝ «լաւագոյն էջե-

1 Տպագրվել է միայն «Օր առաջինը»:

րով, կենսագրություններով եւ համառօտ ուրուագիծով մը, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ մշակուած հայ գրականութեան շուրջ» (տե՛ս Զրոյց Թորոս Թորանեանի եւ Սիմոն Սիմոնեանի միջեւ, «Շիրակ», Պէյրութ, 1989, թիվ 8-9, էջ 8-23) և այլ բազմաթիվ ու բազմաբնույթ գործեր:

Սիմոնյանի հոգեւեւեռուն ծրագրերից մեկը սեփական մամուլ հրապարակելն էր, ինչի համար ուներ բոլոր նախադրյալները: 1958 թվականի ապրիլի 4-ից սկսած «Սեւան» տպարանում սկսում է հրատարակել նաև «Սփիւռք» գրական, գեղարվեստական, հասարակական շաբաթաթերթը, որ Սփյուռքի մամուլի պատմության մէջ ուրույն հետագիծ է թողել(նկ. 8): «Սփիւռք»-ի մատենագիտության նախախոսքում Սիմոնյանը այն հարցին, թե ինչու հրատարակեց «Սփիւռք» շաբաթաթերթը, թվում է «հետեւեալ հիմնական պատճառները».

1. Հայ մտածումի անկախութեան բեմ ունենալու,
2. Զճմարտութիւնները ըսելու անկաշկանդ, ամբողջութեամբ,
3. Նոր ուղիներ որոնելու՝ հասնելու համար մեր ժողովուրդին ու անոր մշակոյթին,
4. Արեւմտահայ գրականութեան, լեզուի, իրաւունքներուն ցաւերուն ծառայելու,
5. Սերունդ հասցնելու՝ գրական ու հասարակական ծառայութեան:

Նաեւ այլ համեստ պատճառներ, բայց երբե՛ք թերթը իբրեւ մեզի ասպարեզ եւ եկամուտի աղբիւր ունենալու» (տե՛ս Մատենագիտութիւն Սփիւռք շաբաթաթերթի, 1984, էջ գ-դ):

Թերթն ունեցել է 1500 բաժանորդ՝ բավականին մեծ աշխարհագրությամբ, բացի Հայաստանից, որտեղ ցավոք, թերթի մուտքը արգելված էր¹: Առավելապէս գրական-մշակութային ուղղվածություն ունենալով՝ «Սփիւռք»-ն իր էջերում լայնորեն տեղ է հատկացրել նաև հասարակական-քաղաքական կյանքին, ունեցել է ազգային-ազատական ուղղություն, իր էջերում լայնորեն արծարծել հայ ժողովրդի ճակատագրին առնչվող բազմաթիվ օրապահանջ թեմաներ, այդ թվում՝ Հայաստանից բռնազավթված տարածքների և դրանց՝ հայրենիքին վերամիավորման հարցը, Հայ դատը, Հայ եկեղեցու հիմնախնդիրները և այլն:

«Սփիւռք»-ը միշտ «մատը դրած է այն նիւթերու վրայ, որոնց մասին արգելուած էր խօսիլ կամ գրել» (տե՛ս Մատենագիտութիւն

1 Մենք այդ հարցերին անդրադարձել ենք այլ հոդվածով: Տե՛ս Մարտիկյան Թ., Գրականագիտական ուսումնասիրություններ, Ե., 2022թ., 301 էջ, էջ 26-54:

Սփիւռք շաբաթաթերթի, 1984, էջ Ե), ուստի պատահական չէ, որ թերթը ունեցել է մոլեռանդ հակառակորդներ թե՛ Սփյուռքում, թե՛ հայրենիքում: Ցավոք, հայրենիքի դռները Սիմոն Սիմոնյանի առաջ փակվեցին, երբ նա 1958 թվականից արդեն համարձակություն ունեցավ խորհրդային մտակաղապարներին ոչ հարիր ազգային հարցեր բարձրացնել, որոնց թվում հայկական հողերի՝ Արցախի, Նախիջևանի ու Ախալքալաքի՝ խորհրդային Հայաստանին միացնելու պահանջն էր, ինչպես նաև Հայոց Եղեռնի ճանաչումն ու դատապարտումը:

Գրահրատարակիչ ու խմբագիր Սիմոնյանը շատ կարևոր էր համարում ստեղծագործական նոր ուժերի հայտնաբերումը, քաջալերումը, նրանց ասպարեզ տրամադրելը թե՛ «Սփիւռք» շաբաթաթերթի էջերում, թե՛ երախայրիքների՝ առանձին գրքերով տպագրության հանձնառությամբ: Այդ նպատակով նաև 1966 թվականից սկսած հինգ տարի անընդմեջ «Սեւան»-ում պարբերաբար լույս է ընծայել նաև **«Սփիւռք-գարուն»** խորագրով բացառիկ համարներ՝ ամբողջովին երիտասարդ, սկսնակ ու խոտումնալից գրողների ներգրավմամբ: Նրանցից շատերը «Սփիւռք»-ի ու «Սեւան»-ի «մկրտությամբ» հետագայում դարձան սփյուռքահայ գրականության երևելի դեմքերը:

Առանձնակի նշանակություն ունեն նաև «Սփիւռք»-ի **հատուկ համարները՝ «Բացառիկ թիւեր»**-ը՝ 24, 36, 44 կամ ավելի էջերով՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցին, Մովսես Խորենացուն, Չարեհ Վեհափառին՝ մահվան կապակցությամբ, Գուրգեն Մահարուն, Հովհաննես Ծիրագին, Վաղարշակ Նորենցին, Պարույր Սևակին, Սողոմոն Տարոնցիին, Կոմիտասին, Գևորգ Չաուշին, Գալուստ Գյուլպենկյանին, Ներսես Շնորհալուն (մահվան 800-ամյակ), Նշան Պեշկեթաշյանին, Հայոց Եղեռնին և Հայ Դատին, հայ գրատպության պատմությանը և այլն:

«Սեւան»-ի աշխատանքը խափանվեց Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատճառով: Թեև պատերազմի ընթացքում էլ՝ 1975-ից մինչև 1983 թվականը, Սիմոնյանը չդադարեցրեց գրահրատարակչական գործունեությունը և տպագրեց չորս տասնյակից ավելի գրքեր, սակայն տպարանի ռմբակոծումից և կրած աղետալի վնասներից հետո այլևս անհնար էր շարունակել տպագրական գործը: Վերջին իրագործումներն էին Մալխասյան քառահատոր բանարանի Բ վերատպությունը 1983-ին և մի բացառիկ ձեռնարկում՝ **«Պատմական եւ յաւերժական Հայաստան»** խորագրով մեծածավալ քարտեզը՝ աշխատակցությամբ Կայծակ Աթաբայանի, Ռաֆֆի Գո-

զաճյանի և Օշին Գրգեաշարյանի (սկ. 9): Այդ գունավոր քարտեզը՝ 200սմ x 90 սմ, հրատարակվում է Լոզանի Դաշնագրի 60-ամյակի առթիվ՝ իբրև բողոք, այն կրում է հետևյալ ձևը՝ «ԶՕՆ/ՊԱՀԱՆՋԱՏԵՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ/ԼՈՉԱՆԻ ԱՆԱՐԴԱՐ/ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ 60ԱՄԵԱԿԻՆ/ԱՌԹԻ, ԻԲՐԵԻ ԲՈՂՈՔ» (սկ.10):

Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել Սիմոնյանի գրահրատարակչական գործունեությունը և նրա վաստակը համարել անչափելի ու բացառիկ: «Տպարան Սեւանը իր Սեւանայ լիճն էր. ոչ միայն անոր մթնոլորտը, այլև անոր անունն անգամ կը հոգեփոխեր զինք», - գրում է Արմեն Դարյանը (Դարյան, 2012, էջ 179): «Ինչպես Սիմոն Սիմոնեան կը հասնի, առանձին, այսքան գործ արտադրելու, լոկ տպագրանակը՝ Եւրոպայի հրատարակչական մեծ տուները միայն կրնան լոյս հանել իրենին չափ: Մինչ մեր ամբողջ պատմութեան մէջ, մինչեւ այսօր, ո՛չ ոք, ո՛չ մէկ հաստատութիւն կրցած է իրեն հաւասարիլ հրատարակչական արտադրութեան մէջ. միայն Երեւանի Պետութիւնն է որ իրմէ աւելի գիրք կը տպէ: Աիմոնեան կամքի, աշխատանքի, նուիրումի, կոչումի արտակարգ երեւոյթ մըն է մեզի համար. ինք թող ըսէ թիւը իր հրատարակած գիրքերուն, իր տպարանին հիմնումէն ի վեր. չհաւատալը՝ ներելի՜ պիտի ըլլար...» (տե՛ս Ստեփան Շահպագ, Անկաշկանդ խոսակցութիւն Սիմոն Սիմոնեանի հետ, «Սփիւռք», 1966, թիվ 43, էջ 4): «Սիմոնեանի ամենէն մեծ արժանիքներէն մէկը, այնպէս՝ ինչպէս ճանչցած եմ զինք, այն էր, որ գիտեր ուրիշները բերել դէպի այն դաշտերը, որոնց մէջ ակօսումի աշխատանք կը կատարէր: Հիմա կ'երեւակայեմ, թէ քանի՜ տասնեակ երիտասարդներ իր միջոցով, իր քաջալերանքով հայ գիրին կապուեցան՝ հայ մամուլով կամ առանձնական հրատարակութիւններով», - Գարեգին Բ Կաթողիկոսն է այսպէս բնութագրել իր երբեմնի մեծատաղանդ ուսուցչին: «Իրապէս անհաւատալի... Եւ ինչպէ՞ս այս բոլորը: Մէկ - (կամ գրեթէ մէկ) մարդով՝ Պ.Սիմոն Սիմոնեանով: Ով կը ճանչնայ զինք, իր ներուժը, նախաձեռնութեան ոգին, յարատեւելու կամքը, յղանալու շնուին ու իրականացնելու կարողութիւնը, ով գիտէ այդ մարդու թաւալքը թղթակոյտերուն ներքեւ ու ետին, պիտի չզարմանայ» (Տե՛ս «Այգ», թիվ 769, 28 օգոստոսի, Բեյրութ, 1955, էջ 2), - գրում է Եղիա Նաճարյանը «Սեւան»-ի՝ դեռևս հնգամյա բերքը արժևորելիս:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրության արդյունքում հանգել ենք եզրակացության, որ Բեյրութում Սիմոն Սիմոնյանի անհատական նախաձեռնությամբ հիմնադրված և շուրջ երեք տասնամյակ Նորա իսկ խմբագրատվությամբ գործած «Սեւան» տպարանը հրատարակած մեծաթիվ դասագրքերով, գրական-գեղարվեստական, պատմաբանասիրական, թարգմանական, բառարանագրական, կրոնադավանաբանական և բազմաբնույթ այլ արժեքավոր հրատարակություններով մեծապես նպաստել է հայ գրքի ստեղծմանը, տարածմանն ու հանրահռչակմանը, սփյուռքահայության գիտակրթական, մշակութային ու ստեղծագործական զարգացմանը, ազգային նկարագրի պահպանմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը Սփյուռքի գրեթե բոլոր հայկական կրթօջախներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. **Գրիգորյան Ա.**, Բազմատաղանդ երախտավորը, Ե., 1999, 104 էջ:
2. **Դանիելյան Ժ.**, Գրական որոնումներ, Անթիլիաս, 2007թ., 476 էջ:
3. **Դանիելյան Ժ.**, Բանասիրութեան բաւիղներուն մէջ, Ե., 2011, 631 էջ:
4. **Դարյան Ա.**, Մատյան բանավոր խոսքի, Բեյրութ, 2012:
5. **Կիւզելեան Ա.**, Կը խօսին Նամակները, Պէյրութ, 2014, 504 էջ:
6. Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, Երևան, 2015, 1120 էջ:
7. Մատենագիտութիւն Սփիւռք շաբաթաթերթի, կազմ.՝ Ս. Օգնայեան, Պէյրութ, 1984, 436 էջ:
8. **Պարիկեան Հ., Վարժապետեան Հ.**, Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպարաններու, հրատ. Հ.Բ.Ը.Մ.-ի Մատենագիտական Յանձնախումբի, մետանաշար թիւ 1, Հալէպ, տպ. «Հալէպ», 1973, 264 էջ:
9. **Սիմոնեան Ա.**, Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի, ուսումնասիրութիւն եւ տաղեր: Յանելուած Նաղաշ Յովնաթանի եօթը անտիպ տաղերը, տպ. Սեւան, Պէյրութ, 1981, 136 էջ:
10. Սփիւռքահայ հաղորդակցական իւրօրինակ ցանց մը 1940-80ականներուն. գիտաժողովի նյութեր (15-17 մայիս, 2013): Խմբագիր՝ Անդրանիկ Տազետեան, Պէյրութ, 2014, 246 էջ:
11. **Փղատեան Կ.**, Զրոյց: 2 հատոր: Սիմոն Սիմոնեանի հետ, Պէյրութ, 1988թ., 136 էջ:

Մամուլ

1. Սիմոնյան Ս., Բաբգեն կաթողիկոս, «Սփիւռք», 13 հոկտեմբերի, թիվ 40, 1966թ., էջ 1:
2. «Հասկ» ամսաթերթ, ԾԵ. տարի, թիվ 3, մարտ, 1986, Անթիլիաս, Լիբանան, էջ 118:
3. «Հասկ» պարբերաթերթ, մարտ-ապրիլ, 1969, էջ 134:
4. Խոջաֆեան Ն., «Սիմոն Սիմոնեանի «Լեռնականներու Վերջալույսը», «Սփիւռք», թիվ 24, 7 Յունիս 1970, Պէյրութ, էջ 4:
5. Եղիայեան Բ., Հասկ պարբերաթերթ, Մարտ-Ապրիլ 1969, էջ 134:
6. Հայր Լ որդի Զաքար Լ Պարոյր Սասիկյան, «Սիմոն Սիմոնեան եւ Արեւելահայ գրականութիւնը», «Սփիւռք», 1966, թիվ 42, էջ 3:
7. Սիմոնյան Ս., «Ապրիլի 24», «Սփիւռք», 23 ապրիլի, 1960թ., էջ 4:
8. Նաճարեան Ե., «Մանրանկար պետիրատը...», «Այգ», թիվ 769, 28 օգոստոսի, Բէյրութ, 1955, էջ 2):
9. Զրոյց Թորոս Թորանեանի եւ Սիմոն Սիմոնեանի միջեւ, «Շիրակ», Պէյրութ, 1989, թիվ 8-9, էջ 8-23:
10. Շահպազ Ս., Անկաշկանդ խոսակցութիւն Սիմոն Սիմոնեանի հետ, «Սփիւռք», 1966, թիվ 43, էջ 4:

REFERENCES

Grqer

1. Grigoryan S., Bazmataghand erakhravory, Yer. 1999, 104 edj:
2. Danielyan J., Grakan voronumner, Angilias, 2007, 476 edj:
3. Danielyan J., Banasirutian bavighivnerun mej, Yer., 2011, 631, edj:
4. Daryan A., Matyan banavor khosqi, Beyrot, 2012:
5. Kivzelian A., Ky khosin namaknery, Peyrot, 2014, 504 edj:
6. Hay gratputyun ev grarvest, Hanragitaran, Yer. 2015, 1120 edj:
7. Matenagitudiun Spyurq shabatateri, kazm.` S. Ognaniean, Peyrut, 1984, 436 edj:
8. Parikean H., Varjapetyan H., patmutiun Sourio hay tparanneru, hrat. H.YB.M.-i Matenagitakan Yandznakhmbi, matenashar tiv 1, Halep, gp. «Halep», 1973, 264 edj:
9. Simonean S., Norahayt taghasac my Stepanos Dashteci, usumnasiruteun ev tagher: Haveluvac Naghhash Hovnayani yoty antip taghery, tp.Sevan, Peyrut, 1981, 136 edj:
10. Spyurqahay haghordakcakan yurorinak cank my 1940-1980 -akanterun, gitajoghovi nyuter, (15-17 mayis, 2013): Khmbagir`Andranik Daghesean, Peyrut, 2014, 346 edj:
11. Polatyean K., Zrouyc, Z hator, Simin Simoneani het, Pdyrut 1988, 136edj:

Mamul

1. Simonean S., Babken katoghikos, «Spyurq», 13 hoktemberi, tiv 40, 1966t., edj 1:
 1. «Hask» amsatert, TCE, tari, Tiv 3, Mart, 1986, Antilias, Libanan, egj 118:
 2. «Hask» parberatert, mart-april, 1969, edj 134:
 3. Khoshafean N., «Simon Simonyani» Lernakanneru Verjaluysy, «Spyurq», tiv 24, 7 hunis 1970, Peyrut, edj 4:
 4. Eghiean B., Hask parberatert, Mart-April, 1969, edj 134:
 5. Hayr ev vordi Zaqr ev Paruyr Sasikyan, «Simon Simonean ev Arevelahay grakanutyuny» Spyurq, 1966, tiv 42, edj 3:
 6. Simonyan S., «April 24», «Spyurq», 23 April, 1960 t. Edj 4:
 7. Najarean E., «Maneankar pethraty...», «Ayg», tiv 769, 28 ogostosi Beyrut, 1955, edj 2:
 8. Zroyc Toros Toranyani ev Simon Simoneani michev, «Shirak», Peyrut, 1989, tiv 8-9, edj 8-23:
 9. Shahpaz S., Ankashkand khosakcutyun Simon Simoneani het, «Spyurq», 1966, tiv 43, edj 4:

Թեհմինա Մարության - Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար: Գիտական հետաքրքրությունների շրջանակ՝ նորագույն շրջանի հայ գրականություն, հայ գրաքննադատության պատմություն, սփյուռքահայ գրականություն (մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի հայկական գաղթօջախներ), հայ մամուլի և գրահրատարակչության պատմություն, գրական կապեր: Տպագրել է 30-ից ավելի հոդվածներ, 3 գիրք:

Теймина Марутян - кандидат филологических наук, доцент. Ученый секретарь Горисского государственного университета. Сфера научных интересов: современная армянская литература, история армянского литературоведения, литература армян диаспоры (в частности, армянские поселения на Ближнем Востоке), история армянской печати и книгоиздания, литературные связи. Опубликовано более 30 статей, 3 книги.

Tehmina Marutyan - PhD in Philology, Associate Professor. Scientific Secretary of Goris State University. Scope of scientific interests: modern Armenian literature, history of Armenian literary criticism, Diaspora Armenian literature (in particular, Armenian settlements in the Middle East), history of Armenian press and book publishing, literary connections. Published more than 30 articles, 3 books.